**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

---

**ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ**

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երևան 22 մայիսի 2019 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Ա. Թունյանի
Ա. Գյուլումյանի

Քննության առնելով Ալետա Միսակյանի
անհատական դիմումի ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

**1.** Ալետա Միսակյանը դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան մուտքագրվել է 2019 թվականի մայիսի 10-ին)՝ խնդրելով. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր»:

**2.** Դիմողը նշում է՝ երբ առաջին ատյանի դատարանը կայացրել է դատական ակտ, մեղադրանքի կողմը ունեցել է հնարավորություն և իրացրել է այն՝ բողոքարկելով դատական ակտը: Արդյունքում Վճռաբեկ դատարանը կայացրել է դատական ակտ, որով բեկանել է ստորադաս դատարանի դատական ակտը և կայացրել է նոր դատական ակտ, իսկ Վճռաբեկ դատարանի կայացրած դատական ակտը բողոքարկման ենթակա չէ: Այսպիսով, ըստ դիմողի խախտվել է իր՝ դատական պաշտպանության իրավունքը, քանի որ իր վերաբերյալ կայացված անբարենպաստ դատական ակտը բողոքարկելու հնարավորությամբ օժտված չի եղել:

**3.** Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրական դատարանում դատական պաշտպանության իրավունքն անձն իրացնում է Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված կարգով՝ ելնելով նաև Սահմանադրական դատարանում գործերի քննության, ինչպես նաև լուծման առանձնահատկություններից: Միաժամանակ, դատական (այդ թվում՝ սահմանադրական) պաշտպանության իրավունքը, ինչպես նաև դրա իրացման՝ օրենքով նախատեսված ընթացակարգային կանոնները ինքնանպատակ չեն և հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող, քանզի դրանց իրացումը ենթադրում է կոնկրետ սահմանադրաիրավական գործընթացներ, ինչը պայմանավորված է դրանց մասնակից սուբյեկտների փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով: Հետևաբար, դիմողը Սահմանադրական դատարանում պետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով: Դրանց սահմանումը միտված է Սահմանադրական դատարանի կողմից

սահմանադրական արդարադատություն իրականացնելու իր գործառույթի պատշաճ և արդյունավետ իրացման ապահովմանը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում նաև նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում, **երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է**:

Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ այն ակնհայտ անհիմն է: Մասնավորապես, դիմողն ընդունելով, որ Հայաստանի Հանրապետությունում գործում է եռաստիճան դատական համակարգ, որը սահմանադրական կանոնակարգում է, այնուամենայնիվ, եզրահանգում է, որ Վճռաբեկ դատարանի կայացրած նոր դատական ակտը բողոքարկման ենթակա չէ: Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների, ներառյալ դատական ակտերի բողոքարկման իրավունքի իրացումը, կարող է կատարվել բացառապես եռաստիճան դատական համակարգի շրջանակներում: Հետևաբար՝ դիմողի պահանջը դուրս է Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունից՝ դատական ատյանների մասով:

Ակնհայտ անհիմն է դիմողի նաև այն պնդումը, որ տվյալ դեպքում դատավարության մասնակիցը և դատախազը գտնվում են անհավասար պայմաններում: Քրեական գործով դատական ակտի բողոքարկման իրավունքը վերապահված է թե՛ դատախազին, թե՛ դատավարության մյուս մասնակիցներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

Ալետա Միսակյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

22 մայիսի 2019 թվականի
ՍԴԴԿՈ-25